



34. ԻՐԵՔՅ ՆԱԽՐՈՐԹ

Կէլին իրեքյ գյեղի նախրորթ: Կերթան տանշտ, կը գան հի-րարու մոտ, կը մեկտեղեն:

Ըն մեկ նախրորթ կասա. - Յեսօր ես էրագ եմ տեսեր: Էրագի մեչ տեսա՝ արև առավ, հանաճին տիր էնոր շող եգար իմ ճակատ:

Ըն մեկէլ նախրորթ ասաց. - Ես էլ էտա էրագի պես էրագըմ տեսա, համա արևի շող եգար իմ աչ թև:

Ըն մեկէլ ասաց. - Ես էլ էտպես էրագըմ տեսա, համա՝ արե-գակ եգար իմ ծախ թև:

- Ապա ի՞նչըլիս էնենքյ, ի՞նչըլիս չէնենքյ, էրթանքյ վի՞ր մոտ՝ մեր էրագի պատասխան տա, թը ի՞նչ ա մեր էրագ:

Ըն մեկ կասա. - Մեկ խալիվոր մարթ գի մըչ էնա տանշտին վար կանա, էրթանքյ էնոր մոտ, մըր էրագի պատասխան տա:

Կերթան, պարև կը տան էտա խալիվորուն, խալիվոր էնոնց պարև կառի:

Կը պատմեն խալիվորուն, թի մենքյ էսպես էրագ մ՝ ենքյ տեսեր:

Խալիվորն էլ կասա. - Օր արև եգար քիւ ճակատ, տիւ տ'էղիս թագավորի փեսա:

Ըն մեկէլին կասա. - Էն, օր քիւ աչ թև արև եգար, տիւ տ'էղիս թագավորի աչ կըշտի վոգիրի փեսա: Էն մեկէլն էլ տ'էղի ծախ կըշտի վոգիրի փեսա:

Կէլին, կը գան, կը գան ուրենց նախրի մոտ:

Ամեկ ուր նախիր կը ժողվա, կառի, կերթա ուր գյեղ հի-րիկուն:

Հիրիկուն օր տ'երթեն, մեկմըկու կասեն. - Վա՛ղն էլ գա՛նք ըստեղ, խենքյ ի՞նչ խորխուրթ մ' ենենքյ: Կարելի՞ օր եղինքյ թա՛գա՛վորի, վոգիորի փեսա:

Մեկէլ օրն էլ կը գա՛ն հիրարու մոտ, կը մեկտեղեն տա՛շտի մեջ:

Իրարու կասեն. - Ի՞նչ ենենքյ, ի՞նչ չենենքյ:

Էն մեկն, օր արև զարկեր ա ճակատ, կասա. - Օր տաւ ծիլսեքյ, տը գա՛քյ նախորոթութեն թողնենքյ, էրթանքյ թագա՛վրու քաղաքյ, նախորոթութեն մե օգուտ չեներ:

Կէլնեն, հիրարու ծեռքեր կը պըռնեն, միասին կերթան:

Կերթան թագա՛վորի քաղաքյ, կը խառցընեն, թե թագա՛վրու սարեն դո՞րն ա:

Մեկ մարթըմ կասա. - Էնա՛ տեղն ա, գացե՛քյ:

Կիյան սարի պակի մեջ, էն տեղ կա՛րակոլներ չըն թողնի մնան, կասեն. - Տաւք խեղճ եքյ, չփլախ եքյ, էլե՛քյ գացե՛քյ:

Էնոնքյ էլ կը տա՛ռման, կը գա՛ն, քաղքոյի մեջ մեկ գա՛շե՛մ կը պառկեն:

Գյիշեր կա՛րակոլներ կան կը գա՛ն, կը տեսին իրեքյ կըտըռտուկ ջըլերով մարթ գա՛ էտա տեղ, կը պըռնեն զէտոնքյ: Կը խառցընեն, թե՛ ընչի՞ եքյ էկեր ըստա, ի՞նչ մարթ եքյ տաւքյ:

Էնոնքյ էլ կասեն. - Մենքյ ֆուկարա մարթ ենքյ, էկանքյ, տը գյենքյ թագա՛վորի սարեն, մե չըթողին ներս, մենքյ էլ էկեր ենքյ, ըստա պառկեր ենքյ:

Էնոնքյ կասեն. - Տաւք ի՞նչ գործ ունենքյ թագա՛վորի խետ, տաւքյ գաղ եքյ:

Կը տանեն, պըռնեն: Գյիշեր թագա՛վորի ախչիկն էլ, էրկու վոգիորի ախչըկներն էլ էրազ կը տեսին:

Էրազի մեջ կը տեսին, թե իրեքյ ֆուկարա նախորոթ պերած ա՛ն, պըռնած, ուրենց կասեն, թը տվեքյ թողնել, մեղքյ են, էղի, չէղի, տաւքյ էնոնց տ'առնեքյ, ծեր կըսմա՛թ էնոնց գյըլիխն ա:

Խըլիսուն իրեքյ ախչիկ կէլին, կերթան թագա՛վորի քաղչի մեջ կը մեկտեղեն, հիրարու կը պատմեն: Էն էնոր, էն էնոր կասեն, թե՛ էսպես էրազ մ'ենքյ տեսեր:

Էն տեղ վոգիորի ախչիկ կասա. - Էրթանքյ վի՞ր մոտ՝ մեր էրազի պատասխան տա:

էն մեկէլ վոգիրի ախչիկ կասա. - Դափըսխանի մուտուռ շատ կարողըցվոր մարթ ա, էրագի պատասխան լավ կը տա, էրթանք ինոր խառցընենք:

Կէրթան, մուտուռ կանչեն, պերեն, կը պատմեն էնոր էնոնց էրզըներ:

Մուտուռն էլ կասա. - Էտպես իրեք խեղճ մարթ հերեկ պերած ա, պըռնած ա, դե Աստըծու հրաման ա, կարելի օր ծեր կըսմաթ էնոնց գըլիխն ա:

Ախչըկներ կասեն. - Թողե՛ք էտա մարթեր:

Թագավորու ականջն էլ կընգի էսա խաբըրքեր:

Թագավոր էտոնց հրաման կենա, էտոնց սերսուփ ԶԻԼ կը խագիւցեն, կը ճամխա, պերա էնոր սարի մեչ:

Տըղեկներ օր լավ քըլեր խագան, էղան լավ, գեղեցիկ քըհել:

Ախչըկներն էլ օր կը տեսին, թե Աստըծուց ա, թե ի՞նչ ա, սիրտ կընգի հիրար, կը պերեն, մե մեկ ուր վըրեն կը փըսակեն:

Էնոնց ԶԻԿ հօդա կը տան, էն տեղ քանի՛մ ժամանակ կապըրվին:

Թե ուրիշ վոգիրի ախչըկներ, թե սաղորագամի ախչըկներ էտոնց էրես կը տան, թե. - ՏԻԼ ընչի՞ գացիք ֆուկարա, խեղճ մարթեր առաք:

Էնոնքն էլ կէլին, կառին ուրենց իրկըներ, կը գան իրիկներու էրկիր:

Շատ կը գան, քիչ կը գան, շատ ու քիչ Աստված գյիտա, կը գան, մեկ քաղաքը մըսաֆիր կէլին հիրիկուն:

Օր մ' էրկու էտա քաղաք կը մնան: Էտ քաղքի մախլուխաթ կը տեսին, թե իրեք մարթ, իրեք կնիկ էկած ան, մըսաֆիր էղած: Ամա էնոնց ծիեր խրեղեն, քըլեր անթիկա:

Վոլին կիմացուցին, թե էսմալ մարթեր էկած ան:

Էտա վոլին կասա. - Գացե՛ք, էտա մարթեր ճամխե՛ք էնա պըրակ, մե մեկ շալանկըմ փետ պերեն: Եփ օր մարթեր ճամխեք փետե, թե էտոնք խանադան մարթ են, չըխտ տը դիմադրին, չըն էրթար: Թե չէ, համան էլան, գացի՛ն, էտոնք խեղճ, ֆուկարա մարթ են, կէլի օր գաղեր են:

Կէրթան, էտ մարթերուն կասեն. - Որ օր գա էսա քաղաք, տ'էրթա էնա պըրակ, շալանկըմ փետ պերա հաւըրյմըթին: Էլե՛ք, գացե՛ք պըրակ, մե մեկ շալանկըմ փետ պերեք հաւըրյմըթին:

Էտոնքն էլ կասեն. - Հետօր հեվար ա, մուքն ա, վաղ առա-
վոտուն կերթանք:

Մարթեր կը տաննան վոլու մոտ:

Կասեն. - Ասինք, ասին, թե հետօր մուքն ա, առավոտ կեր-
թանք:

Վոլին էլ կասա. - Էնոնք խեղճ, ֆուկարա մարթ կերևան:
Խըլիսուն գացեք, գենոնք ճամխեք էնա մեծ պըրակ, էն տեղ
ասլան կա, գենոնք տ'ուտա, մենք էնոնց կըխտեր¹⁹, պաներ կը
պերենք:

Խըլիսուն մարթեր կերթան փետե:

Կիյան մեշի մեչ, կը տեսնան, օր էրկու ասլան կը գան,
էտոնքն էլ կելնին, գերկու ասլան կը պըռնեն, կը պերեն, փետ կը
պաննան վըրինքներ, կը գան: Քաղքին կը մոտանան: Վոն օր
տեսի, կը վախենա, թե ասլան պըռնած, փետ ա պանգած վըրեն:

Վոլին էլ գետոնց կըխտեր ճամխած, տարած ուր մոտ, կը
խառցընա, թե տալք ի՞նչ մարթ եք, ի՞նչ մարթ չեք:

Օր կը տեսին, կը գան, վոլուն կասեն. - Մարթեր էրկու աս-
լան պըռնած, փետ պանգած վըրեն, առան էկան:

Վոլին էլ կելնի, շոտ էնոնց կըխտեր կը ճամխա ուրենց քը-
րա էրած տուն:

Կառին փետ, կը գան հալքըմըթի տառ:

Ջավթիք կը փախեն տեսա-տենա:

Վոլին կասեն. - Գացե՛ք, ասե՛ք, թող առին ուրենց
ասլաներ, տանին, թողին սար, չեղի թե գան, էսա ժողովուրտ
ուտեն:

Էնոնքն էլ կառեն ասլաներ, կը տանեն ուրենց տան տառ:

Կըխտերուն կը խառցընեն, թե ինչպե՞ս եք:

Կըխտերն էլ կասեն. - Վոլին մե տարավ, կը խառցփոռցեր,
մե կը չարչըրեր, մե կասեր՝ ծի տ'առնեք:

Էտոնքն էլ կը հըռըկեն:

Մեկ նախորոթ կասա. - Ասլաներ տանենք, թոնենք մեչ
վոլու տան, էնոր էրեխեք, պաներ ուտեն, էնի կռապաշտ ա:

Թագավորի ախչիկ կասա. - Չէ՛, մըք էնի, էլե՛ք, մեր ճամ-
բախ պըռնեք, էրթանք:

¹⁹ Կնիկ, հոգնակին լինում է կըխտեր (Ծ.Բ.):

Էտոնքյն էլ ուրենց էլած-չէլած կը պառնան վըր ասլաներուն, կը խեծին ծիանքյ ու կը տան ճամբախ, կերթան:

Իրեքյ-չորս օր ճամբախ կերթան: Կերթան, մեկ ճամբախըմ կը խասեն, քնոսուն մարթ ճամբախ կտրած ա, թալան կենեն:

Տեսան, օր փայթո՛մ կը փախի, կը գա էնոնց հառեծ:

Էրկու մարթ նստուկ են փայթոնը վեր, փայթոնջին էլ էտոնց կասա. - Էտևանց գողերն են, հառճըվանց իրեքյ մարթ, իրեքյ կնիկ, էրկու ասլան պառնած գի կը գան, էսա ի՞նչըխ էնենք:

Կը վախենան, թե չէղի էսա ասլանի տերերն գողերու ինգերն են:

Վաճառականներ կասեն. - Էղի, չէղի, տ'երթանքյ էտոնց հառեծ:

Կը գան հառճըվներ, փայթոնջին կը կանի: Էտ թագավորի փեսեքյ կը խառցընեն փայթոնջուց, թե՛ ընչի՞ կը փախեքյ:

Փայթոնջին էլ կը վախենա, կասա. - Վա՛յ թե գողերու ինգերներն են:

Կասա. - Ախպե՛ր, մե ասեքյ, թե տիւքյ ի՞նչ մարթ եքյ:

Կասեն. - Մենքյ թագավորի քաղքեն գի կը գանքյ:

- Ապա էտա ասլաներ ի՞նչ են, ի՞նչըխ եքյ պըռներ:

Էտոնց կը պատմեն ուրենց գյըլխու գալած: Էտոնքյ կիմանան, թե գողերու ինգերն չեն:

Կասին. - Ախպըրներ՛, վոլա՛, տու պարի էկաքյ: Մենքյ գացինքյ էնա տեղ, գող կեն, մե թալեն, մենքյ փախանքյ, ջորիվ ծեռքյերուց ազատանքյ, տու էլ մ'երթաքյ, ծե թալեն:

Ինոնքյ էլ կասեն. - Մենքյ տ'երթանքյ, թը գան մեկ էլ թալեն:

Փայթոն կը կայնի, էնոնքյ կասեն. - Թե էնոնքյ թալընվան՝ կը փախենքյ հիտուց, թե չըթալընվան՝ մենքյ էլ կերթանքյ:

Էտա մարթերն էլ կը գան: Գողեր կը պըռքին, օր իրեքյ մարթ, իրեքյ կնիկ, էրկու ասլան պառնած կը գան:

Գողեր կը վախենան, օր կը տեսին ասլան պըռնող մարթ են:

Գողեր կը թողնին, կը փախին: Էտոնքն էլ կերթան գողերու տեղ, կը տեսին, օր մեկ մեծ վառանըմ գարկած էտա տեղ, ինչ օր թալնած են, գի էտա տեղ, կա խազար ոսկու ապրանքյ:

Էտա մարթերն էլ վառանի հառեծ պայա կէղին:

Կը տեսին, որ չադրի մեջ ախագիյն անթիկա պաներ, հիրարու կասեն. - Ի՞նչ էնենք, ի՞նչ չենենք:

Փայթոնցին էլ փայթոն քըշեց, գըննաց, տեսավ, որ ախագիյն ապրանքներ գի տա տեղ: Էն էլ էն տեղ կանավ, էճան միասին: Էն մարթեր էն տեղ քյար ընգան, ինչ որ կարցան, լըցին մըջ փայթոնին, պանցին վըր ասլանքըներուն, գըննացին խընդ-րաց:

Շատ գանցին, քիչ գանցին, շատ ու քիչ Աստված գիտա, քանի մ'որ գանցին:

Գանցին էտա թուլըներու քաղաք: Էնոնց տուն նստան խընդրաց: Քանի մ'որ էտա տեղ ապըրվան, ապրանքներ ծախեցին, մեկ խնգար, երկու խնգար ոսկու չափ փարա առան: Էլան, էտա քաղքեն պանցին, գանցին:

Գանցին մեկ տեղըմ, տեսան որ գյետըմ կա հանեճ: Էտա գյետի հանեճ կանան: Կարմունջ էլ չըկա: Ի՞նչըխ տ'ընցին:

Էտ մեկ նախորոթ՝ ծախակողմի վոգիրի փեսեն, գետա կըխտեր խեծուց վըր ասլաներուն, ընցուց:

Էտա ծիանքյն էլ կապեց հիրար, հավսար պըռնեց, խեծավ վըր ասլանին, քաշեց, ընցուց: Էտ երկու մեկէլ նախորոթ ծիով գարկին մըջ գյետին: Աման գյետն էգար, ըգնախորոթներ տարավ, ծիանքյ պըռծան, էլան տուս:

Մընաց մեկ նախորոթ: Առավ իրեքյ կին, երկու ասլան ու գըննաց:

Գընաց մեկ գյեղըմ, հիրիկուն մըսաֆիր էղավ մեկ թագ տու'մ:

Տեսավ, որ մեկ խալիվորըմ նստեր ա վըր տըռան:

Ասաց. - Պարն քյե, խալիվոր:

Ասաց. - Վա՛յ, տու պարի չէկար:

Ասաց. - Ընչի՞, տեղ չըկա՞, էսօր մըսաֆիր չը՞ս տիրեր:

Ասավ. - Մըսաֆիր, ի՞նչ կը խառցընես, վոն որ գանցեր ա ըս տուն, էլ տուս չիլեր, կուգես գըննա, կուգես տանցիր:

Էն էլ գըննաց ներս, պեռներ էթալ ցածր:

Տեսավ, որ մեկ տուռ էպաց, էկավ տուս: Նախորոթ տեսավ, որ ի՞նչ մարթ՝ մարթըմ, որ էսա տուն վեր չըմտեր՝ մեկ աչք գի ծակատ: Նախորոթ շատ վախեցավ: Նա էն ա ետ տաննա, մա էրթա: Մընաց կանուկ:

Տեսավ մեկ աչքեն մարթ նախորոթին, ասաց. - Արի՛, արի՛ ներս, քյե կենեմ ընթրիս:

Մեկ աչքեն մարթ ըզնախորոթի ճիվեն պըռնեց ու ըզկըխտե-
րուն, տարավ տուն:

Էն ինչ թագաւորի ախչիկն էր, վոզիրքերուն, աչքերու քա-
ֆիկ պիրին վըր աչքըներուն, չըն գըխշընա պըշքին, նախորոթն էլ
պըշքավ, տեսավ, օր էրկու մարթ տել սաղ՝ կախած չանգըլեն:

Մեկ աչքեն մարթ ըզնախորոթ նստուց:

Խարցըլեց մոտեն. - Հի՛ւստ կը գաս, էսա կըխտեր քյե ի՞նչ
են:

Ասավ. - Թագաւորի քաղքեն կը գամ, էսա կըխտերն էլ էնա
մեկ իմ կնիկն ա, էնա էրկուսն էլ իմ քուրերն են:

Մընաց, ասաց. - Տիւրք անոթի չե՞ք, խաց չը՞ք ուտեր:

Ասաց. - Վոլ՛ա՛, անոթի ենք:

Էլ՛ավ, ճիչ խաց մ՛ էպի, վերեն էլ էրկու հիսնի էփած թև էդիր
վըրեն:

Նախորոթի աչք օր ընգաւ հիսնի թև, էլ չըգըխշըցավ գան-
ուտեր:

Ասաց. - Հիսնի թև ա, ընդո՞ւց խաց չըս ուտեր, կե՛, պան
չըկա:

Նախորոթն էլ հախաւ միս չըկերավ, պըրտու՛ւմ մ՛ էրկու խաց
կերավ:

Մընաց չուր հիրիկուն, էլավ, էրկու մարթեր, օր կախուկ ա
չանգըլից, առավ, էկավ: Էնպես սաղ, շիշ մ՛էգար տակ վեր,
գյըլխուց էլ՛ավ տիւս, պըռնեց վըր կրակին, էփեց, զոտներ, թևեր
կերավ, ջանտանկն էլ էթալ էն տեղ, ասաց. «Էն էլ խըլխտուն կու-
տենք»:

Գյիշեր էտա կոր մարթ առավ նախորոթի կնիկ ու քըլնավ:

Նախորոթ գյիշեր էլ՛ավ, կրակ էրաց: Տեսավ, օր ուր կնիկ ու
էտ մեկ աչքեն մարթ ծեռքեր ընցուցած իրար գյըլխու տակ ու
քըլնած:

Նախորոթն էլ էպեր, թուր քաշեց, էտիր էտ կոր մարթու
վըզին, մեկ անգամ օր քաշեց, տարավ կեսն:

Մեկ աչքեն էլ՛ավ քիչըմ էտա դարբան գաւգաւ, գաւգաւ:

Նախորոթի կնիկ էլ ասաց. - Տիւ ընչի՞ էն ջահեղին էմալ
գարկիր, ափսոս չէ՞ր:

Ենպես օր ասաց, նախորդի հըրս էկավ, էլավ, կնիկն էլ իտու հանձն թրի, կնիկն էլ ըսպանեց:

Ձեն կորն էլ իտուր հառն թրի, պըրտից գիրարուց, էթալ են տեղ:

Էլավ, գուր պաներն էպանց, առավ ասլաներ, թագավորու ախչիկ ու վոզիրին, գըլնաց:

Էլավ տուս, ըխթիյարն ասաց. - Տու ի՞նչըխ պըռծար, էլար, մարթակեր մեկ աչքեն քյե չըկերավ:

Ասաց. - Էն կորին ըսպանեցի:

Ասաց. - Շա՛տ աղեկ էրիր, սպանեցիր, մոտեն պըռծանքյ:

Մարթն ինգավ ուր ճամբախ, գըլնաց: Տեսավ, օր մեկ մարթըմ էնդեխեն կը գա՛, էնոր ոտըն, ծեռ խընծ գհմշուս, էնոր հըմեն մեկ բեղ խընծ աղվեսըմ կա:

Պիր մ'էլ, գըլըխ պիպռով, պըռներ ծեռ, կա խընծ վարի լուծ: Էկավ հանեծ, ասավ. - Տու դա՞ր կերթաս, մա՛րթ:

Ասաց. - Ես էնա տեղեն կը գամ:

Ասաց. - Էն անաստված մեկ աչքեն կոր գհ վըր ճամխին, տու ի՞նչըխ ես ինոր ծեռնեն պըռծե:

Ասաց. - Ես գենի ըսպանեցի:

Ասաց. - Ձի էրկու խորոխպոր տըղա հերեկ պըռներ, տարեր, սա՞ղ են, կերե՞ր, ի՞նչ արեր:

Ասաց. - Մեկն իփեց, կերավ, մեկէլն չանգըլեն կախ, ես էկա:

- Դե՛, տու գըլնա՛, ես էրթամ դըխ իմ խորոխպոր տըղեն:

Ընցավ, էկավ: Էկավ, ինգավ մեկ ուրիշ թագավորի՛մ խողն էլ:

Տեսնա, օր էտա հիրիկուն դալալ կանչեց. - Ո՛ր գա, էրթա քըլնի մեր ժամտուն չու՛մ խըլխուն, թագավոր ինչ ուզա, կը տա:

Էն էլ ասաց. - Վոլա՛, ես տ'երթամ, քըլնիմ ըն ժամտուն, խի ի՞նչ կա:

Քըլնավ ժամտուն, ճրաքյ չընցուց չու՛մ կեսգիշեր, տեսավ, օր մեկ հիշապ պատեն էլավ, էկավ, օր ըզնախորթն կըլնա:

Նախորթ թուր էտուր ճակտին ու էտուր հիշապի պերնին, հիշապ պերնից ըզբամակը վեր ճըղեց, էխան տուս:

Մընաց չու՛մ խըլխուն, ժամխար էկավ, խենքյ՝ ըզնախորթ կիրեր ա՞, չըկիրեր:

Գնցին, տեսան, օր մարթ ըզհիշապ պըրտեր, լցեր ա գի ժամտան մեջ:

Ջույնար տվին թագավորին, թե մըսաֆիր մարթ մ'էկավ, քըն-նավ, ըզհիշապն պըրտեր ա:

Նախորոթն էլ էթող, գըննաց թագավորու ախշըկան ու վոզիրի ախշըկան կուշտ:

Մեկ էլ ճամխեցին օր՝ արի, թագավոր ինչ օր կուգես, քյե կը տա:

Թագավորու ախշըկեն ասաց. - Էրթնմ ի՞նչ ուզեմ, ի՞նչ չուզեմ:

Ասաց. - Օր կիյաս, բնդչե մ'ուզա, մեկ տան տեղ ու մեր ապրուստ:

Մարթն էլնավ, գըննաց: Գըննաց թագավորի մոտ:

Թագավորն ասաց. - Ուզա՞ քիւ ուզած:

Ասաց. - Իմ ուզած էն ա՝ բնդըմ տաս, տու՛մ շինես մեջ, իմ ապրուստ:

Թագավորն էլ ասաց. - Հիգյի՛մ, տու՛մ ու ամիս տաս ոսկի փարա տըվե՛ք էնոր, թ՛ ապըրվի:

Մարթն էլ էլնավ, առեց թագավորի ախշիկն ու վոզիրին, գըն-նաց, նստավ թագավորի տըված շենըզ վեր, էն տեղ ապըրվան:

Մեկ քանի՛մ ժամանակ էն տեղ ապըրվան:

Նախորոթն օրըմ կելի, կերթա հուրիշ գյեղըմ: Կերթա, մըսա-ֆիր կելի:

Էտա գյեղի ռես էտա մարթուն կասա. - Էնա սարի տակ՝ տնշտի մեջ, մեկ շենըզըմ կա, հախափուր մ'էլ գի հինե: Էտա հախափուրն էլ էնպես ա, օր վոն օր էրթա, ուր ծեռ, գըլլիխ, աման լըվա, կելի ոսկի: Մեմակ թե էթըցող չըտնացեր:

Էտա նախորոթն էլ կելի, տննա, կը գա ուր տուն:

Կառի ուր ասլաներ, կերթա խընծ էտա տուն, օր ռես շանց ա տվեր:

Կերթա, էտա տան կը մոտխըսնա, մեկ խալիվորըմ կը գա հանեծ, կասա. - Ա՛յ մարթ, դի՛ր կերթաս:

Կասա. - Էսպես տու մ՛ ա ծի շանց տված, տ'երթամ, խիմ ի՞նչ ա:

Ասաց. - Եփ օր կերթաս, մեկ մարթնկեր պառավըմ կա ըն տեղ: Էտա տան մեջն էլ եփ օր կերթաս, էտա պառավ կը գա քիւ

հանձնեմ, քյե կառի, կերթա: Տըռան հիտուն էլ փորեր ա, խոր ա շի-
ներ, պարանկ ջըլեր տըրեր ա վըրեն ու հարթ լըցեր ա վըրեն,
մարթ չըգյիտեր, թե խոր ա: Տիւ չընցես հանձնեմ, օր տիւ ընցիս
հանձնեմ, քյե կլորա էտա խորը վեր: Տիւ ասա՝ մամիկ, ես կարիք
եմ, չըմ գյիտեր, տիւ ընցիր հանձնեմ, էրթանք: Եփ օր կընցի հանձնեմ,
տիւ գէնի կլորա խոր վեր:

Տըղեն օր կերթա, պառավ կը գա հանձնեմ, կասա. - Այ՛ մըսա-
ֆիր, տիւ պարի էկար, շոտուց ծի մըսաֆիր չէր էկե, իմ տուն ճամ-
խե տիւ:

Տանի վըր տըռան, կասա. - Ընցի՛, էրթանք տուն:

Կասա. - Մամիկ, ես չըմ գյիտի ճամխըներ, կը մոլըրիմ, տիւ
ընցի իմ հանձնեմ, էրթանք:

Մամիկ կըցկա հանձնեմ, խասի տըռան մոտ, մամիկ կը դըմըշ-
կըլա, կեցկա խոր: Խորի տակն շըշի պես պաներ կեն, կը մտնեն
մամիկի քամակ վեր, փորաց կը տան տիւ:

Տըղեն էլ կերթա տան մեչ, կը տեսնա օր հախափուր գի էտա
տեղ:

Կասա. - Տ՛ էրթամ իմ ծեռներ լըվամ, խի օղո՞րթ կեղի օսկի,
չեղիր:

Ծեռքեր կը լըվա, կեղի ոսկի: Մազերն էլ կը լըվա, կեղի
ոսկի: Կէլնի, ուր ասլաներ կառի, կը տաննա, կը գա:

Կը գա, ռեսին մըսաֆիր կեղի, օր էնոր շանց էր տվեր:

Ռես կը տեսնա, օր ծեռքեր հըմեն էղեր ոսկի, մազեր էղեր
ոսկի: Ռեսն էլ կը պերա, էնոր էրկու պեռ ապրանք կը տա էնոր
փեշքյեշ: Էն ուր ասլաներ կը պաննա, կը տա հանձնեմ, կը պերա
ուր տուն: Կը գա էնոր տուն, կը տեսնին, օր ծեռքեր, մազեր ոսկի
ա, թագավորին հիմաց կը տան: Թագավոր կը կանչա, կը տանի,
թե՛ էտի ի՞նչ ա, ի՞նչ պան ես էրեր, արի ռաստին քըսա էրա:

Էն էլ թագավորին կը պատմա ուր գըլխու գալած: Թագա-
վորն էլ կէլի, կառնի վոգիրներ, կերթան էտա տան տեսութեն:

Կերթա, հախափորի մեչ ուր ծամեր կը լըվա, կը տաննա ոսկի,
վոգիրներն էլ էնպես, սադրագամն էլ էնպես:

Թագավոր կը պերա, կարակոլ կը տըռա հանձնեմ, կենա
բեկլիգ:

Կագաթեք կը տըպին, թե՛ ֆըլան թագավորի խող էսպես
հախափուրըմ կա:

ՀԱՆՐԱՆՈՒՄ ԹԱՊԱՆԱԿՈՐՆԵՐՆԵՐՆ ԷՒ ԿԵԼՆԻՆ, ԿՐ ԳԱՆ ԹԱՄԱՂԱ ԷՆԵՆ, ԹԵ Ի՞ՆՃ Ա:

ԷՍ ՈՒՄԲՐՈՐԹԻ ԱՆԵՐ ԹԱՊԱՆԱԿՈՐՆ ԷՒ ԿՐ ԳԱ, ՎՈՂԻՐՆԵՐՆ ԷՒ ԿՐ ԳԱՆ:

ԿՐ ԳԱՆ, ԷՍԱ ԹԱՊԱՆԱԿՈՐԻ ՏՈՒՆ ՄՆՍԱՖԻՐ ԿԵԼԻՆ:

ԿՐ ԽԱՌՈՐՆԵՆ. - ՔԱՒ ԽՈՂՈՒ ՄԵՃ ԷՍԱԿԵՍ ԽԱՄԱԿԱՐՈՐՆ ԿԱ, ՍՈՒՄՔ Ա, ՕՂՈՐԹ Ա:

ԹԱՊԱՆԱԿՈՐՆ ԷՒ ԿԱՍԱ. - ԽԱ՛, ՕՂՈՐԹ Ա:

- ԷՍԻ ԻՆՃԱԿԵ՛Ս ԷՂԱՎ, ԻՆՃԱԿԵ՛Ս ՃԵՂԱՎ:

ԹԱՊԱՆԱԿՈՐՆ ԷՒ ԿԱՍԱ. - ՁԻ ՄՆՍԱՖԻՐ Մ՛ԷԿԱՎ, ՈՒՐ ԳՅՈՒԽՈՒ ԳԱՆՈՒՆԵՐ ԾԻ ԱԿԱՏՄԵՃ, ՄԵՐ ԺԱՄՏԱՆ ԽԻՂԱՎ ՈՍԱԿԱՆԵՃ, ԳՅՈՒՆԱՃ ԷՆ ԽԱՄԱԿՐԻ ՄԱՐԹԱՆԿԵՐ ԱԿԱՌԱՎՆ ԷՒ ՈՍԱԿԱՆԵՃ, ԷՆ ԽԱՄԱԿԱՐ ԿՐՆՈՂԱՎ:

ԿԱՍԵՆ. - ԴԵ՛, ԿԱՆՃԱ՛, ԹՐ ԳԱ, ՏԵՍԻՆԵՅ:

ԵՓ ՕՐ ՈՒՄԲՐՈՐԹԻՆ ԿՐ ԿԱՆՃԵՆ, ԿՐ ԳԱ: ՆԱՄԲՐՈՐԹ ԿՐ ՏԵՍՆԻ՛ ԷՆՈՐ ԱՆԵՐ, ՎՈՂԻՐ, ՄԵԿԵԼ ՎՈՂԻՐ ՈՒ ԹԱՊԱՆԱԿՈՐ ԷԿԱԾ ԷՆ ՏԵՂ:

ԿԵՐԹԱ ԹԱՊԱՆԱԿՈՐԻ ԾԵՌ ՈՒ ՎՈՂԻՐԻՆ ՈՒ ՄԵԿԵԼ ՎՈՂԻՐԻՆ: ԹԱՊԱՆԱԿՈՐ, ՎԵՂԻՐ ԳԵՍԻ ՃՐՆ ՃԱՆՃՐՆԱ:

ԿԱՍԵՆ. - ՆՍՏԻ՛Ր, ԽԵՆԵՅ՝ ՏՈՒ Ի՞ՆՃՈՒՄ ԷՍԱ ԽԱՄԱԿԱՐ ԿՐՆՈՂԵՐ ԵՍ:

ՆԱՄԲՐՈՐԹՆ ԷՒ ԿՐ ԱԿԱՏՄԱ ՈՒՐ ԳՅՈՒԽՈՒ ԳԱՆՈՒՆ:

ԹԱՊԱՆԱԿՈՐ ԿՐ ԽԱՌՈՂԱ. - ՏՈՒ ԽԱ՛ՆՏ ԵՍ, Ո՛Ր ՏԵՂԱՅԻ ԵՍ:

ԿՐ ԱԿԱՏՄԱ ՈՒՐԵՆՃ ԱԿԱՏՄՈՒԹԵՆ, ԹԵ՛ ԽՐԵՅ ՈՒՄԲՐՈՐԹ ԵՆԵՅ, ԳԱՆՃԻՆԵՅ ԹԱՊԱՆԱԿՈՐԻ ԵՂԱՅՅ, ԵՍ ՏԱՌՈՂԱՆԵՅ, ԻՄ ԵՐԿՈՒ ԽՆԳԵՐԵՅԻՐ ԳՅԵՍ ՏԱՐԱՎ, ՄԵԿ ԱՄԻՅԻԿՆ ԷՒ ԵՍ ՈՍԱԿԱՆԵՅԻ, ԹԵ՛ ԷՍԱԿԵՍ ԷՂԱՎ, ԷՍԱԿԵՍ ԷՂԱՎ:

ԹԱՊԱՆԱԿՈՐ ԿԱՍԱ. - ՄՐԿԱ ՏՈՒ ԷՆ ՄԱ՛ՐԹՆ ԵՅ:

ԿԱՍԱ՛ ԽԱ:

ԿԱՍԱ. - ՔԱՒ ԱՆԵՐ ՃԱՆՃՐՅԻ՛Ր, ԽԵՆԵՅ:

ԿԵՐԹԱ, ԱՍՏԻԿ ՎՈՂԻՐԻ ԾԵՌ ԿՐ ԱՂՈՂԱ, ԿԱՍԱ. - ԷՆԱ ԵՂԱ ԻՄ ԱՆԵՐ:

- ԴԵ ՄՆԱՃԱԾՆԵՐ ԿԱՆՃԱ, ԹՐ ԳԱՆ, ՏԻՍՆԱՆԵՅ:

ԿԱՆՃԵՆ ԹԱՊԱՆԱԿՈՐԻ ԱՄԻՅԻԿ ՈՒ ՎՈՂԻՐԻՆ, ԿԱՌԻՆ, ԿՐ ԳԱՆ ՈՒ ՏԵՂ:

ԿՐ ՃԱՆՃՐՆԱՆ ԳԻՐԱՐ, ԿՐ ԳԱՆ, ՈՒՐԵՆՃ ԽՈՐ ԾԵՌ ԿՐ ԱԿԱԳՅԵՆ, ԽՐԱՐՈՒ ՎԵՐԵՆ ԿՐ ԽՐՆՈՂԱՆԱՆ:

Դիր նախորոթին կասա. - Ապա ի՞նչըխ էնենք, տու չուր
մըկա չը՞ս փըսակվեր:

- Չէ՛, կասա,- էնոք հալա իմ քուրերն են:

Թագավորն կը պերա, էտոնք կասա. - Տամ քյե:

Կասա. - Չէ՛, անգամ ես էտոնք էրեր եմ իմ քուր:

Վերճ խըլխուն կերթան էտա հախալըրի տեսութեն:

Նախորոթ հրաման կուզա, ուր աներ, թագավորն էլ ուրենց
ծեռ, մազեր կենեն ոսկի:

Ու կելենն, կառին էրկու ախչըկներ ու նախորոթ, կիյան
հանաճի աներոջ տուն:

Էրկու ասլան էլ խետ կը տանի:

Պստիկ վոզիրի մեկէլ ախչիկն էլ կը փըսակեն վերեն,
ուրախութեն կենեն, էնոք կը խասին ուրենց մուրազին, տուն էլ՝
քուլն:

